ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Երևան – 1, Նալբանդյան փ. 104

№ 13 / 657 « 15 » սեպտեմբերի 2023 թ.

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր պարոն
Ս. Առաքելյանին

Հարգելի՛ պարոն Առաքելյան

ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի անձնակազմի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ակադեմիայի կազմավորման 10-ամյակի առթիվ:

Արդարադատության ակադեմիան նշանակալի ավանդ ու կարևոր դերակատարություն ունի իրավական ոլորտում, քանի որ յուրաքանչյուր գործունեության հաջողության գրավականը, անշուշտ, իրավագիտական գիտելիքներով զինված կադրերի մասնագիտական բարձր պատրաստվածությունն է:

Այսօր Ակադեմիան իրավական ոլորտի կադրերի պատրաստման ժամանակակից գիտակրթական կենտրոն է: Համոզված եմ, որ այսուհետ ևս դուք պատվով և մասնագիտական բազմակողմանի կարողություններով շարունակելու եք կատարել ձեզ վստահված առաքելությունը:

Կրկին շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ և Ակադեմիայի ողջ անձնակազմին քաջառողջություն, մտքի ու բազկի կորով և նոր ձեռքբերումներ՝ ի փառս մեր հայրենիքի:

ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի պետ,
գեներալ-մայոր Հ.Կարումյան